

**ԾՐԱԳԻՐ**  
**«ՀԱՏՈՒԿ ԿԱՐԻՔՆԵՐՈՎ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԱՌՈՂՋ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ**  
**2-ՕՐՅԱ ԴԱՍԸՆԹԱՑԻ**

3 և 5 հոկտեմբեր, 2016թ., ք. Երևան  
Հայաստանի ամերիկյան համալսարան

**1-ին օր՝** հոկտեմբերի 3, 2016, ժամը՝ 2:00 – 4:30

*0-5 տարեկան հատուկ կարիքներով երեխաների սոցիալ-հոգեբանական  
զարգացման գնահատման ծրագիր:*

Այս ծրագիրը կօգնի ծանոթանալ 0-5 տարեկան հատուկ կարիքավոր երեխաների  
զարգացման և կրթության համար անհրաժեշտ մեթոդներին:

Զարգացման ստուգիչ ծրագրին տեղեկանալով՝ մասնագետները կարող են  
նպաստել երեխաների առողջ զարգացմանը և կանխել երկրորդական  
հաշմանդամության առաջացումը:

Դասընթացի նպատակները/խնդիրները:

- 1) Բացատրել զարգացման գնահատման ծրագրի օգուտները:
- 2) Հասկանալ, թե ինչպես բացասական և դրական գործոնները կարող են ազդել  
մարդու զարգացման վրա:
- 3) Իմանալ, թե ինչպես է ընթանում փոքրիկների սոցիալ-հոգեբանական  
զարգացումը:
- 4) Բացահայտել մարդու խառնվածքի հատկանիշները:
- 5) Սահմանել մեթոդներ, որոնք կարող են նպաստել երեխաների սոցիալ-  
հոգեբանական զարգացմանը:

Բովանդակություն

- 1) Ի՞նչ է իրենից ներկայացնում զարգացման ստուգիչ ծրագիրը:
- 2) Ինչու՞ է այն անհրաժեշտ:
- 3) Մեթոդների ընդլայնումը տանը, դպրոցում և վերականգնողական խնամքի  
կենտրոններում:
- 4) Ինչու՞ է սոցիալ հոգեբանական զարգացումը կարևոր երեխաների համար  
անկախ այն բանից՝ երեխաները հատուկ կարիքներով են թե ոչ:

5) Ձևավորել աշխատանքային հմտություններ, որոնք նպաստում են երեխաների առողջ զարգացմանը և ընտանիքների հետ ամուր փոխհարաբերությունների ստեղծմանը:

#### Աշխատանքային հմտություններ

- 1) Որպես ուղեցույց կիրառել երեխաների զարգացման համար առաջարկված մեթոդները:
- 2) Ծանոթացնել գործող մոտեցումներին, որոնք ավելի արդյունավետ կլինեն կրթական առողջական և թերապևտիկ միջամտությունների ընթացքում:

**2-րդ օր՝** հոկտեմբերի 5, 2016, ժամը՝ 2:00 – 4:30

*Հաջորդ կարիքներով երեխաների վաղ տարիքի թերապևտիկ միջամտություններ: Ընդհանրությունն աջակցության տրամադրում:*

Այս սեմինարը նախատեսված է ներկայացնելու ընտանիքների բարոյահոգեբանական ապրումները, երբ լսում են հաշմանդամ երեխայի ծննդյան լուրը: Կառաջարկվեն ծնողների հետ աշխատելու համար համապատասխան մոտեցումներ: Նաև կներկայացվեն միջամտություններ, որոնք գործնական և արդյունավետ կլինեն թե՛ հիվանդանոցային, և թե՛ տնային պայմաններում:

#### Ուսուցման նպատակը

- 1) Երեխայի ծնված իսկ օրից ծնողներին օգնել և կրթել այնպես, որպեսզի նրանք ճիշտ հասկանան երեխայի հիվանդության ախտորոշումը և օգնեն երեխայի հետագա զարգացման համար նպաստավոր պայմաններ ստեղծելուն:
- 2) Աջակցել ծնողներին հաղթարելու երեխայի հիվանդության ախտորոշման հետ հապված իրենց հոգեկան ապրումները:
- 3) Օգնել ընտանիքներին թերապևտիկ միջամտությունների հետ կապված որոշումներ կայացնելու հարցում:
- 4) Հասկանալ հաշմանդամության ազդեցությունը ծնող-երեխա հարաբերության վրա:

#### Աշխատանքային հմտություններ

- 1) Աշխատել ծնողների և ընտանիքների հետ երեխայի ծնված իսկ օրից կամ ախտորոշման պահից ի վեր:
- 2) Նպաստել երեխա-ծնող, մասնագետ-ծնող և մասնագետ-երեխա ամուր հարաբերությունների սերտաճմանը:
- 3) Մխիթարել հուսահատված և վշտացած ընտանիքներին, երբ գիտակցում են, որ կորցրել են իրենց երազած երեխային:
- 4) Կիրառել այնպիսի միջամտություններ, որոնք կնպաստեն երեխաների առողջ և ապահով զարգացմանը:

*Դասընթացի եզրափակիչ մաս: Ժամը՝17:00 – 18:00*

Քրիստինա Հակոբյան և Սերինե Սահակյան

1)«Հայաստանում բուժքույրական գործունեության, կրթության և քաղաքականության ազգային գնահատում» հետազոտության արդյունքների ներկայացում և քննարկում: